ԶՈՐԱՅՐ ԽԱԼԱՓՅԱՆ

ԵՍ ՔԵԶ ՄԱՏԱՂ,

Նորից ինչ հեռ նույնն է կատարվում. երեկ եմ վերադարձել Արցախից, այսօր ցանկություն ունեմ կրկին մեկնելու: Երեկ այս ժամին նրանց կողքին էի, կարող էի ցանկացածին կանգնեցնել, և ցանկացածը, իր թշվառ տեսքի, խղճուկ հագուստների, չսափրված դեմքի ու նիհարած դիմագծերի միջից դուրս կիաներ իր արտաբինին անհարիր, մեկ ուրիշ մարդ: Միշտ լսել եմ և ասա տեսել, թե ինչպես դրսից եկածները զարմանում են արցախցիների վրա, և դա միշտ հասկացել եմ չափազանցություն, ավելորդ հաճոյախոսություն, անտեղի մեծարում: Կամ ես էլ եմ ասփիճանաբար դառնում դրսի մարդ, կամ պիտի ընդունեմ, որ, երևի, ինչ-որ չափով, այո, մերոնք մի քիչ ուրիշ են:

Արցախում կարծես պատերազմը խլվում են միմյանց յեռքից, ամեն մեկն ինքն է ցանկանում առաջինը վազել ճակատ: Մեկն ասաց. «Մարտունուց տուն չհասած, ասացին՝ սկսալ են: Ութ հոգով լցվեցինք Ռուբիկի «Մոսկվիչը», ա՜, եթե տասը բոպե ուշանայինք, մեզ ավտոմատ չէր մնալու, քու արև; 325 ավտոմատից 12-ն էր մնացել»: Կարծես խոսքը կոնֆետ բաժանելու մասին էր, քիչ էր մնացել այս երեխային չհասներ: «Հետո՞», հարցրի: «Հետո նոր հնալ ըմ, հայ ըմ կերալ»: Բայց ես դա չէի հարցնում, այնտեղ, այնտե՞ղ ինչ եղավ: «Հա, դե շրջապատման մեջ ընկան, ինչքանը ջարդվեց, ջարդվեց, մնացածը փախավ, գնաց»: Ուրեմն, նրանց ողջ հարյակման իմաստը եղել է սրան մի քանի ժամով տանը հայ ուսելու հնարավորությունից կտրելը...

Նորապեղծ ու նորաբաց համալսարանի լսարաններում միայն աղջիկներ էին նստած, տղաները ճակատում են, տղա ուսանող չտեսա: Միայն լուսանկարներ էին, թվով քսանյոթ անուն-ազգանուն, երկու տարեթիվ, և այդ թվերի արանքում 18, 19, 20, շատ-շատ՝ 26 տարեկաններ, որոնք այլևս ավարտել էին համալսարանը, առանց հասցնել-տվորելու: Աղջիկներին ասացի, որ առանց տղաների նրանք շատ պակասավոր են, որ լսարանի տպավորությունը ծանր է, չայնս ինչ չէր ենթարկվում, իսկ նրանք անտարբեր, մռայլ սպասում էին, թե ուրիշ բան չունե՞մ ասելու, գույն գրական որևէ սրամտություն, թեկուզ անեկդոտ: Եվ իրավացի էին, ես նոր-նոր էի տեսնում և զգում, իրենք հոգնել էին այդ ամենից:

Բայց երեկոյան մի ուսանող տեսա, հենց համալսարանի տնօրենի տանը: Հայրը հայրաբար հպարտանալով ասաց, թե Հակոբի երեսը իրենք էլ տասը-քսան օրով չեն տեսնում, գալիս է, կամ չի գալիս, Քելբաջարից եկավ՝ երեսը, չեռքերը, ողջ կերպարանքը սև, վառոդամրով պատած: Մայրն էլ ինչ-որ բան ասաց էլեկտրականության բայակայության, տաք ջրի դժվարության մասին, ապա կիսատ թողած, անցավ հյուրասիրության գործին, իսկ ես գնացի 19-ամյա զինվորի զենքի հավաքածուն դիտելու, որը բաղկացած էր մեկ «Մոսին» հրացանից, մեկ որսորդական ընտիր երկփողանոց, օպտիկական սարքով մեկ փոքր տրամաչափի հրացանից և, վերջապես, իր մարտական զենքից, որը նա արցախավարի անվանեց «աքա»: Եվ սա հնչում է որպես «թոյրիկ» կամ «թոտո», միաժամանակ զենքի տեխնիկական անվանումն է՝ «ԱԿԱ», այն է «Ավտոմատ կալաշնիկովա»: Այս ամաչկոտ ուսանողը ընդամենը մեկ շաբաթ առաջ է վերադարձել Քելբաջարի մարտերից, և մայրը տաշտակում դնելով լողացրել է վառոդամրից սևացած իր երեխային, իսկ հայրը ծիծաղելով պատմում էր այլ ու այլ հանգամանքների մասին, կարծես որդու այդ գնալու ու գալու հետ որևէ տագնապ չունի: Այս մարդն իր բնակարանը, գիտական կարիերան, ապահով գոյությունը թողել է Երևանում, եկել, այստեղ համալսարան է բացել, իր հետ բերել է որդուն և ուղարկել ճակատ, և սա մեր աչքին հերոսություն է, իսկ իրենց համար՝ հեչ:

Ես Արցախ էի թռել, բանիս բուն իմաստով, այո, թռել, այնտեղից Թալիշ գնալու կամ կրկին թռչելու, որովհետև այն գիշեր քանի՞ հոգի զանգեցին, թե Թալիշն ազատագրված է: Սկզբում շնորհավորում էին, հետագա օրերին արդեն թալիշեցիները հարցնում էին. «Ճի՞շտ է, որ Շահեն Սեդրիյանը բեզ ուղղաթիռով նամակ է ուղարկել»: Իմ նպատակներից մեկն էլ Մեդրիյանին տեսնելն էր տեղում, բայց Արցախ հասնելով առաջին իսկ օրը լսեցի, որ Թալիշը չի ազատագրվել, երկրորդ օրն էլ լսեցինք Սեդրիյանի ու խմբի եղերական վախճանի բոթը:

Մոսկվայից ժամանել և նույն հյուրանոցում էր իջևանել իմ հին ընկերը, այժմ հռչակված ու նշանավոր մի կինոռեժիսոր, Արցախի մասին ֆիլմ նկարելու: Նրան ասացի, թե միտք ունեմ զինվորական իշխանությանը դիմելու՝ ինչ Գյուլիստան՝ հայդուկների մոտ ուղարկելու համար: Չգիտեմ ով առաջինն ասաց. «Միանում եմ քեզ»: Ասացի՝ եթե ուղղաթիռ չլինի, գնալն անհնարին է, բայց եթե ուղեկից ճարվեց, ուրբով կգնամ: Կարծեմ հենց այդ ժամանակ էր, ասաց. «Միանում եմ քեզ»: Բայց նա Մոսկվայից ծանր ու թանկարժեք նկարահանման տեխնիկա էր բերել, համարյա մի ավտոբուս, ու չնայած նաև նկարահանման խումբն էր մեծ երևի անհնարին էր այդքանն ուսած անցնել անտառներով, Տոնաշենից մինչև Գյուլիստան: Մինչև Թրղին ճանապարհն ինչ անհայտ էր, այնկողմ սկսվում էին իմ պատանեկան փարիների որսատեղերը, ամեն կածան գիտեի, բայց կածաններն առաջվանը չէն, ամեն բայլի ականներ են, մերը կամ նրանցը: Աստիճանաբար հրաժարվեցի այդ գաղավսրից, բայց նա քերել էր այժմ դժվարությամբ ճարվող, շատ սուղ՝ ամեն կինոռեժիսորի երազանք «Կոդակ» ժապավեն, այն էլ՝ բավականին շատ, և այդ ժապավենին պիտի դրոշմվեին Արցախի ապագա դեպքերը, որոնք անհայտ են բոլորին, և նա առնվազն չորս տարի ուշացումով էր եկել. նա նոր-նոր էր խրվում Արցախի դրության մեջ, որից դուրս գալ չկա, կամ՝ միայն տարիներ անց:

Այս էլ քանիերորդ անգամ հասնում եմ Արցախ, և Թալիշը մնում է անմատչելի: Բայց, ինչպես ասաց մի թալիշեցի՝ «Մենակ թե ազատեն, թող մեր տնից մի կտոր պատ մնացած լինի, ես կգամ, այդ պատի տակ գլուխս բարին դրած կքնեմ, կաշխատեմ, տունս կշինեմ, էլի4 կապրեմ Թալիշում»: Այո4, միայն հողը մերը մնա, մենք բարեր կրծելով՝ մեր տները նորից ենք շինելու, Թալիշի, Մատաղիսի, Տոնաշենի, Գյուլիստանի չորերը լիքն են հազարամյա սրբություններով, չենք կարող հաշտվել նրանց գերության հետ:

Տպավորությունները շատ են ու բառասային, չգիտեմ ում ինչը կհետաքրքրեր, արդյո՞ք հայ կամավորների Մարտակերտի ճակարիս Ստեփանակերտ վերադարձը և Հյուրանոցի պատի տակ մինչև առավոտ ավտոբուսի սպասելը: Գիշերն արգելվում է կամ անհնարին է Ստեփանակերտ-Լաչին ճանապարհն անցնելը: Իրենց ծանր զենքով, ռազմական հանդերձանքից անբաժան, նրանք ողջ գիշեր քայլում էին Հյուրանոցի պատերի տակ, մայթերին, և նրանցից միայն երկու-երեք հոգի սպառկեց կանաչներին և զենքը ցած դրեց: Անունները չեմ հիշում, երկրաբանական գիտությունների թեկնածու, ակնոցավոր, ոտքից գլուխ մտավորական, հետախուզական ջոկի հրամանատարը, որը Երևանում երկու զավակ էր թողել, Մոսկվայի կնոջը, ինքն էլ Մոսկվայից, ռուսական կրթությամբ այդ հայը, որը սակայն ընտիր հայերեն էր խոսում: Տոհմիկ հայ սպայի այդ կերպարը ինչ ծանոթ էր սեփարիսիվներից, և ես այն պատրանքն ունեի, թե Ստեփանակերտում չենք, այլ Կարսի միջնաբերդում: Մյուսը, 18 տարեկան մի զինվոր, որին ասացի. «Տուր զենքդ, ուսած մնամ, տեսնեմ դու ինչ ես զգում»: Սակայն, բայի զենքից, նա կրկնակի կշռով զինամթերք էր կրում. հինգ բոպե անց հոգնեցի: Ի վերջո, ես այդ գիշեր հայ զինվոր ու հայկական բանակ տեսա, մինչ այդ եղածը խորհրդային բանակում ծառայող հայեր են եղել պարզապես: Ոչ միայն հայ զինվոր, այլև հայկական ճակատից վերադարձող զինվոր: Հասկացա, պատասխանեմ. գիշերվա մթության մեջ նրանք իմ աչքին հսկաներ երևացին, երբեք չեմ մոռանալ, թե մենք՝ հայերս, այդքան բարշրահասակ ենք:

Շուշի այցը Գանձասարից առաջ եղավ: Ուրեմն, նախ Շուշին, որի բերդի վերականգնած մուտքից վեր դեռ մնում է աղրբեջաներեն ժանգոտող (այո, հենց առանց ստորակետի) «Շուշա»-ն: Ճանապարհին, ասանված փղի պես, փլված է այն նախահարյակ տանկը, որն առաջինն է մտել ու խփվել Շուշին գրավելիս: Այժմ ասեն անցնող մի բան է տանում մետաղյա անհատնում զանգվածից, ինչ բաժին ընկավ հետևակայինի վառված, սևացած, բայց պողպատի ամրությունը պահպանած փոքրիկ բահիկը, որը սովորաբար ամրացված է լինում ծածկանի վրա: Մի զարմանալի զուգադիպությամբ Գանձասարում էլ գտա հենց հետևակայինի բահիկի փայտյա մի կոթ, և իմ հուշանվերում Շուշին ու Գանձասարը միացան իրար. Երևան հասնելով, հաջորդ օրը մեր բակում այդ բահիկով մի ծառ տնկեցի:

Անշուշտ, շատերին է ծանոթ մարդկային հայկական ճակատից վերադարձող զինվոր: Հասկացա, պատասխանեմ. գիշերվա մթության մեջ նրանք իմ աչքին հսկաներ երևացին, երբեք չեմ մոռանալ, թե մենք՝ հայերս, այդքան բարշրահասակ ենք:

Շուշի այցը Գանձասարից առաջ եղավ: Ուրեմն, նախ Շուշին, որի բերդի վերականգնած մուտքից վեր դեռ մնում է աղրբեջաներեն ժանգոտող (այո, հենց առանց ստորակետի) «Շուշա»-ն: Ճանապարհին, ասանված փղի պես, փլված է այն նախահարյակ տանկը, որն առաջինն է մտել ու խփվել Շուշին գրավելիս: Այժմ ասեն անցնող մի բան է տանում մետաղյա անհատնում զանգվածից, ինչ բաժին ընկավ հետևակայինի վառված, սևացած, բայց պողպատի ամրությունը պահպանած փոքրիկ բահիկը, որը սովորաբար ամրացված է լինում ծածկանի վրա: Մի զարմանալի զուգադիպությամբ Գանձասարում էլ գտա հենց հետևակայինի բահիկի փայտյա մի կոթ, և իմ հուշանվերում Շուշին ու Գանձասարը միացան իրար. Երևան հասնելով, հաջորդ օրը մեր բակում այդ բահիկով մի ծառ տնկեցի:

Անշուշտ, շատերին է ծանոթ մարդկային

ԴՈՒ ԻՆՉ՝ ՀԵՉ

Արցախ

ժապավենին պիտի դրոշմվեին Արցախի ապագա դեպքերը, որոնք անհայտ են բոլորին, և նա առնվազն չորս տարի ուշացումով էր եկել. նա նոր-նոր էր խրվում Արցախի դրության մեջ, որից դուրս գալ չկա, կամ՝ միայն տարիներ անց:

Այս էլ քանիերորդ անգամ հասնում եմ Արցախ, և Թալիշը մնում է անմատչելի: Բայց, ինչպես ասաց մի թալիշեցի՝ «Մենակ թե ազատեն, թող մեր տնից մի կտոր պատ մնացած լինի, ես կգամ, այդ պատի տակ գլուխս բարին դրած կքնեմ, կաշխատեմ, տունս կշինեմ, էլի4 կապրեմ Թալիշում»: Այո4, միայն հողը մերը մնա, մենք բարեր կրծելով՝ մեր տները նորից ենք շինելու, Թալիշի, Մատաղիսի, Տոնաշենի, Գյուլիստանի չորերը լիքն են հազարամյա սրբություններով, չենք կարող հաշտվել նրանց գերության հետ:

Տպավորությունները շատ են ու բառասային, չգիտեմ ում ինչը կհետաքրքրեր, արդյո՞ք հայ կամավորների Մարտակերտի ճակարիս Ստեփանակերտ վերադարձը և Հյուրանոցի պատի տակ մինչև առավոտ ավտոբուսի սպասելը: Գիշերն արգելվում է կամ անհնարին է Ստեփանակերտ-Լաչին ճանապարհն անցնելը: Իրենց ծանր զենքով, ռազմական հանդերձանքից անբաժան, նրանք ողջ գիշեր քայլում էին Հյուրանոցի պատերի տակ, մայթերին, և նրանցից միայն երկու-երեք հոգի սպառկեց կանաչներին և զենքը ցած դրեց: Անունները չեմ հիշում, երկրաբանական գիտությունների թեկնածու, ակնոցավոր, ոտքից գլուխ մտավորական, հետախուզական ջոկի հրամանատարը, որը Երևանում երկու զավակ էր թողել, Մոսկվայի կնոջը, ինքն էլ Մոսկվայից, ռուսական կրթությամբ այդ հայը, որը սակայն ընտիր հայերեն էր խոսում: Տոհմիկ հայ սպայի այդ կերպարը ինչ ծանոթ էր սեփարիսիվներից, և ես այն պատրանքն ունեի, թե Ստեփանակերտում չենք, այլ Կարսի միջնաբերդում: Մյուսը, 18 տարեկան մի զինվոր, որին ասացի. «Տուր զենքդ, ուսած մնամ, տեսնեմ դու ինչ ես զգում»: Սակայն, բայի զենքից, նա կրկնակի կշռով զինամթերք էր կրում. հինգ բոպե անց հոգնեցի: Ի վերջո, ես այդ գիշեր հայ զինվոր ու հայկական բանակ տեսա, մինչ այդ եղածը խորհրդային բանակում ծառայող հայեր են եղել պարզապես: Ոչ միայն հայ զինվոր, այլև գանգերից գոյացած բուրգերի նկարները, կարծեմ Վերեշչագինն էլ ունի: Քաղաքի բոլոր տները հրդեհված են և նման են դատարկ ակնախոշերով ու մերկ ատամները բաց գանգերի, իսկ Շուշին այդ մռայլ տների կամ մռայլ գանգերի մի իսկական բուրգ է: Լաչին քաղաքը նույնն է, բայց ավելի փոքր, Լաչինի շրջանի գյուղերը դարձյալ գանգերի բուրգեր են, էլ ավելի նվազ մեծությամբ:

Շուշին նաև աղբակույտի տպավորություն թողեց, ոչ միայն վերջին գրոհի, ավերածության հետևանքով և այն, որ մեկ տարի փողոցներն ավելի երես չեն տեսել, այլև պատճառն օտարի ճաշակն էր, գեղեցկության իրենց հասկացողությամբ կառուցված շինությունները, մանավանդ Ղազանչեցոց եկեղեցու շուրջ, եկեղեցին թաղելու միտումով, իրենց ճաշակով շքեղություն և, իբր, ճարտարապետություն, մեր ճաշակով պարզապես աղբ, ենթակա բերվելու, մաքրվելու, տեղում մերն ու հինը վերականգնելու, ինչպես եղել է Շուշին մինչև 1920 թվականի ջարդերն ու հրդեհը: Ինչ խոսք, ճիշտ այդպես էլ Ղազանչեցոց ս. Ամենափրկիչ վիթխարածավալ ու հոյակերտ եկեղեցին էլ նրանց աչքին է աղբ:

Գանձասարը նույնպես բարբարոսային հարյակման է ենթարկվել օդից, գավթի տանիքը բացված է ճեղքված գանգի նման, տեղում վալվի նման շաղ են եկել տնականիս մեկի սպիտակ քարերը: Մոտակա անտառի ինչ-որ չորում էր պատժված օդաչուն, որը դեռ գտնված չէր:

Վանք գյուղում, պարեկության շենքի մոտ, հենակներին հենված մի զինվոր քորում էր ծնկից ներքև բացակա ոտքի տեղը: Ասացի. «Դեռ քո՞ր է գալիս»: Ասաց. «Հա, նոր է»: Ազգանունը՝ Ասրյան: Ցույց տվեց, թե որտեղ է կորցրել ոտքը, և քանի որ չեռքերով հենված էր, միայն ունքերի խաղով, վերին անտառի կատարներին, ուր այժմ անտառով մեկ ափված են հակառակորդի դիակները: Այդ նրանք են, որոնց ծնողները համարում են անհայտ կորած ու հույսով դեռ սպասում են: Մերյակա գյուղերի ծերունիները հողով են արել, որպեսզի վարակ չտարածվի, բայց կատարներին դեռ շատ կան անթաղներ, ու երբ իրիկվա կողմ «Երվանդի» աղբյուրի մոտ հացի էինք նստում, այն վերևներից եկող վճիտ առուն վանող էր:

Մյուս Ասրյանը, զգեստների մի մասը զինվորական, մյուսն իր տնականը, ինչպես արցախցի շատ զինվորներ, լավ խմած, այն խմածը, որն իր տեսքով հարգանք չի ներշնչում, աչքերի մեջ գինովության անմտությունը, ասաց. «Հրեն, նա է մեզ պահում», ծնոտը շարժեց դեպի սարգլխի Գանձասարի վանքը: Ես թերթային լեզվով ասացի. «Թե՞ հակառակը, դուք եք պահում Գանձասարը»: Նա ծիծաղեց. «Փիհ, հի, հի, ի՞նչ զենք է, որ նրա ուժից ուժեղ է. կարալ չի մուրենա»: Հարցրի, թե քանի՞ թշնամու դիակ կլինի անտառում, տա՞սը: «Փիհ, հի, հի»: Քսա՞ն: «Փիհ, հի, հի»: Նա նստել էր հակատանկային ականներից մեկի վրա, որ այստեղ կույտերով թափված էին, մի մասն էլ արկղերից դեռ չհանած: Ես չեռս վերցրի դրանցից մեկը, զարմանալով թեթևության վրա, երկու, շատ-շատ երեք կիլոգրամ, և այդքան զորեղ: Հիշեցի անցյալ տարվա ամառային ծանր մի օր, երբ Երևանում նստած էի ընկերոջս աշխատասենյակում, և նա ժամը մեկ ուղիղ գծով կապվում էր Կոմանդոսի հետ: Ծանր ու վճռական մարտեր էին Կիչան-Սրխավենդի ուղղությամբ, թշնամու տասնյակ տանկեր փորձում էին ճեղքել արցախցիների պաշտպանության գիծը և կտրել Մարտակերտը Ստեփանակերտին կապող ճանապարհը: Այն կողմից Կոմանդոսը պատասխանում էր. «Տանկերն օդ են թռչում մեր ականների վրա»: Տանկերը, այդ բազմատոնն զանգվածները՝ այս երկու-երեք կիլոգրամանոց ականների վրա: Եվ ահա այս գինովցած զինվորն իր նստուքը հանգիստ իջեցրել է ականի հենց կարմիր ներկած միջուկի գլխին: Ասացի. «Բա որ պայթի»: Նույն չեով ծիծաղեց. «Վախտ է լինում, տանկը վրայով անցնում է, իսկի չի պայթում: Համ էլ առանց զապալի պայթել չի»: Մեր զրույցը խանգարեց խրոնիկայի օպերատորը, որը հեռվից արդեն զգվեցնում էր, հիմա էլ մոտենալով-մոտենալով եկավ, ինչ ու այս գինովցած զինվորին դարձրեց իր պրոֆեսիայի ասրանքը:

Աղրբեջանը մեզանից հզոր կամ առավել է ամեն ինչով՝ արդյունաբերությամբ, բնակչության թվով, նավթով, ազատ ճանապարհներով, ծովով, թիկունքում՝ Թուրքիայով: Մեր միակը՝ հայ զինվորի առավելությունն է աղրբեջանցի զինվորից, և հենց դա էլ վճռորոշ եղավ: Նրանցից մեկն էլ այս գինովցած, դալի-դալի վանքեցի զինվորն է:

Արցախում շատ են թռուցիկ տպավորություններ նկարահանողները, բայց մոսկվացի ընկերս իրոք շատ էր ուշացել, ես նրան ասացի, որ բռնածը տարիների գործ է, թող չհուսահատվի, որ այժմ կռիվներ չկան, չհաջողվեց թեժ մարտեր նկարահանել, այս խմորը դեռ շատ ջուր է տանելու: Ասացի նաև, որ այսքան տարվա կռիվներից միայն մի փոքր, հիրավի, պրոֆեսիոնալ հաղորդում եմ տեսել՝ Նեզորովի նկարահանածը. պրոֆեսիոնալի չեռքն իսկույն է զգացվում, թեկուզ և պրոֆեսիոնալ բախտախնդրի:

«Էն-բի-սի»-ի աշխատակիցը խնդրեց խսիկի առաջ մի քանի խոսք ասել աղրբեջանցի գերիների մասին, որոնց մոտ էիք, տեսնելով նրանց հետ իրենց լեզվով իմ բացատրվելը: «Գերիները» թվով տասը-տասնհինգ հոգի էին, ներառյալ նրեխաները, որոնցից մեկը չափազանց սպիտակամորթ մի նորածին էր: Իմ լեզվի իմացությունը տեսնելով, վարիչը, որի մանկապարտեզում գերավորված էին, խնդրեց թարգմանել, որ այսօր թեյը բաղցր չի լինելու: «Շյաքսը յոխտը»:

Գերի կանանցից մեկն անսպասելի հափշտակեց չեռքս ու համբուրեց, չգիտեմ նրա համար, որ երեխաներին կոնֆետ բաժանեցի, թե՞ որ հույս տվի՝ բոլորդ շուտով տուն եք գնալու, պարզապես բենզին չկա:

Ես կարող եմ երկար պատմել գերիների մասին, բայց առանց այդ էլ խոսքս երկարեց, չնայած որոշել էի այս դարձիս առհասարակ ոչինչ չգրել:

շարունակությունը՝ 12-րդ էջում

Նկարում՝ Մարտունու պաշտպանական 25-րդ գումարտակի դասակի հրամանատար ԳԱՐԻԿ ԹՈՐՈՍՅԱՆԸ (ձախից), գումարտակի հրամանատար ՍԱՎԱ ՕՀԱՆՅԱՆԸ և փոխհրամանատար ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆԸ:

Լուսանկարները ԱՏՈՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ

Ես քեզ մատաղ, դու ինչ հեչ...

(սկիզբը 11-րդ էջում)

Գերիների հանդիպելիս միշտ լեզվիս ծայրին է եղել հարցնել. «Ու՞մ հողն է սա, բիմին թորփաղրը»: Բայց միշտ էլ հետ եմ կանգնել, ինչի՞ս է պետք մի ոմն գերու, վախեցած սպրուկի ողորմելի պատասխանը: Ես կյանքանցայի ազատ ադրբեջանցու բերանից լսել. «Բիմին թորփաղրը», չէ՞ որ աշխարհը չգիտի, իրենք հո գիտեն, իրենց ոտքով են մահ եկել ու իրենց աչքով տեսել երկու հազարամյա մեր կոթողներն ու փաճարները, և հազարավոր խաչերի այս աշխարհում չեն տեսել գոնե մեկ մահիկ, չէ՞ որ հենց դա փաստերի փաստն է, և ոչ թե անցեղ ու անազգ Ստալինի ծխամորճից ժանգոտած ցուցամատը:

Քանի որ գերիները Քելբաջարից էին, բոլորին առանձին հարցրի՝ ազերի, թե՞ բուրդ են: 94-ամյա փառավոր մի ծերուկ, որի ներսը երևի եռում էր իր գլխավերևում կանգնած հաղթանակած Էրմանի հարցերից, չորս անգամ էլ հանգիստ ասաց. «Թյո՞րբ»՝ թքելու նման: Միայն մեկ բրդուտի կար:

Իսկ 94-ամյա թուրքը, որ Շուշվա ջարդերին ծաղկուն տարիքի դղամարդ է եղել, գուցե անչամք հայ մանուկների է մորթել, և այժմ էլ զգացածը վախ չէր կամ զղջանք, այլ ատելությունից դարձյալ իր, իր արյունն էր եռ գալիս չորացած երակների առվակներում:

Ամեն քայլափոխի գրական նյութ է, գրող է պետք. բայց դա նոր եկողների գործն է, նրանց, որոնց ձեռքին դեռ հրացան է: Սպեփանակերտում մի վերաբնակ ասաց, թե չորս ամիս իր տանը կերակրում է ադրբեջանցի մի պատանդ կնոջ, որպեսզի փոխանակի գերի ընկած իր կնոջ հետ, որն այժմ գտնվում է Մինգեչաուրում, այս կընոջ ամուսնու տանը, որն էլ այնտեղ է հայ կնոջը կերակրում, բանի անգամ հեռախոսով խոսել են, նա իր կնոջ հետ, ազերին իր կնոջ, նաև կնիկներն իրար հետ:

Երկարեց, բայց չեմ կարող մի քանի խոսք չասել Քելբաջարի թալանի մասին: Ինչպես Շահումյանի ու Մարտակերտի առումից հետո էր առժամանակ ճակատներում լռություն, կարծես գայլը ոչխար էր ճանկել և այժմ զբաղված է խժռելով, հիմա էլ նույնն է Քելբաջարի առումից հետո. որքան էլ հայերին վիրավորական թվա այդ բառը, գայլի հետ համեմատվելը նրանք թողնում են ուրիշներին, գերադասելով համեմատվել... չգիտեմ ինչի հետ: Ինչ որ է, հայերից նրանք, որոնց ձեռքը ոչինչ չէր ընկել, ասացին. «Թալանով են զբաղված»: Բայց, հիրավի, մեջտեղը մի բան չկա: Վանք մեկնելիս երբեմն ճանապարհին հանդիպում էին Քելբաջարից ոչխար ու կով քշող մարդիկ, բայց նրանք թալանածն էին հետ բերում, ոմանք անգամ սեփական կովն ու անկողինն էին գտել Քելբաջարի գյուղերում:

Լույսը նոր էր բացվում, կենտրոնական փողոցում, Քելբաջարից նոր ժամանած մի բեռնատար էր կանգնած, հիմնականում տեղաշորով բարձած, շուրջը մի քանի «թալանչի» հայեր, ոչ հեռու անցյալում իրենք էլ թալանված, ՉԳԻՏԵԻՆ ՈՆՑ ԵՆ ԲԱԺԱՆԵԼՈՒ, ու նաև ձեռքը կրծքին կապած մի զինվոր, որն այս ամենից մասն չուներ, բանի որ վառելիքի իր բաժինը չէր վճարել, նրա խնդրածը մի բարձ էր, բայց կպա՞ն: Բոլորն իջել էին գույնզգույն տեղաշորների շերտերի մեջ, մեկը քնով էր անցել, չէր իջնում: Վերջը, մի փոքր քիթը դուրս բերեց, ասաց. «Ա՜, հեգաբլբիր ժողովուրդ եք, գյուղից փախչելուց համարյա մի տարի տեղաշորում չեմ քնել, ինչի՞ չեր թողնում մի քիչ աչք փակեմ»: Վարորդը սպեփանակերտցի էր, երբ հարցրի, թե ինքն իր համար ի՞նչ էր բերել, ասաց չարությամբ, կարծես չիմանալով վարաբանել էի իրեն. «Ես հարամ ապրանքը իմ տունը չեմ տանի», իսկույն երևաց, որ թալանվածներից չէ, տեղաշորում քնողներից է: Ահա այս թալանվածներն էին Քելբաջարի թալանողները:

Ի՞նչ բան է թալանը: Մինչև հիմա հայը սովոր է, որ իրեն թալանեն, բառն անգամ թուրքերեն է: Թուրքին թողել է հարստագույն Շահումյանն ու Մարտակերտը, հիմա ձեռքն է ընկել անասնապահական երկիր Քելբաջարը, ինչ-որ անցուդարձ կա նորաբաց այդ երկրի հետ, որի նշանակությունը դեռ լավ չենք ըմբռնում, ավելի կարևոր, քան ժամանակավոր ավարառությունը: Բայց, ասեմ, Վանքի անտառներում, «Երվանդի» աղբյուրի մոտ ոչխարի խաշլամա կերա, թալանի ոչխար, ոչ մի տարբերություն չտեսա:

Մարտունի:
Ձախից՝ մեխանիկ ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ
և նշանառու օպերատոր ԱՐԱՐԱՏ ՇԱՍԱՍՅԱՆԸ

Լուսանկարը ԱՏՈՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ